ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դպրոց՝ «Հերոսների միջն. դպրոց» ՊՈԱԿ

Ուսուցիչ՝ Լուսինե Առաքելյան

Ղեկավար՝ Կիմա Օհանեսյան

ՎԱՅՔ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1 Ուսուցչի կողմից սովորողի ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված մանկավարժական պայմանները.....**5**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՐՈՂՈՒՆԱԿԱՀԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2.2 Ուսումնական նախագիծ «Հայոց պատմություն» առարկայից.....**9**

Եզրակացություններ.....**17**

Օգտագործված գրականության ցանկ.....**18**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտական ու տեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ կրթական համակարգում նույնպես շարունակական կերպով տեղի են ունենում բարեփոխումներ ու բարելավումներ: Նշված բարեփոխումները գալիս են վերանայելու ուսուցման ավանդական մոտեցումները՝ իրենց հետ բերելով ուսուցման առավել ակտիվ ու ժամանակակից մոտեցումներ, տեխնոլոգիական լուծումներ: Հանրակրթական և առարկայական նոր չափորոշիչներիում հստակորեն ամրագրված է դասագործընթացին սովորողի դերի վերաձևակերպման սկզբունքը՝ սովորողը պասիվ լսողից վերածվում է ակտիվ մասնակցի, ով պետք է լինի ակտիվ, նախաձեռնող ու ստեղծագործ: Այս մանկավարժական մոտեցումները ենթադրում են, որ ուսումնական գործընթացը բացի գիտելիքահեն բաղադրիչից, ձեռք է բերում նաև կարողունակահեն բաղադրիչ, դասին շեշտվում է սովորողի ակտիվ գործառնական դերը, արժևորվում է ոչ միայն գիտելիքն, այլ նաև՝ կարողունակությունները:

Ստացվում է, որ ժամանակակից մեթոդների ներդրումը հնարավորություն է տալու, որ սովորողը դառնա դասի ընթացքի անմիջական մասնակիցը, ինչի արդյունքում բուն դասապրոցեսը դադարելու է լինել ձանձրալի, միօրինակ: Այս կերպ սովորողի մոտիվացիայի համար բարենպաստ միջավայր է ապահովվում, վերջինս շահագրգռվում է դեպի դասը: Փստորեն, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերարժևորում: Նմանօրինակ բարեփոխումները կարող են մեծապես խթանել սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանը, ինչպես նաև ստեղծագործ մտածելու ու գործելու կարողությանը:

Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունի «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդումը, որի շրջանակներում ուսուցիչ զանազան մեթոդամանկավարժական հնարների, դասի զանազան տիպերի ու ձևերի ներդրմամբ կարող է հասնել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին, որոնցից են՝ սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը: Պատմությունը միայն ժամանակագրություն չէ, պատմության արդյունավետ ուսուցումը պահանջում է քննադատական ու վերլուծական միտք, ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ու պատկերավոր մտածողություն:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումներից բխող չափորոշչային

պահանջների կարևորմամբ, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու ունակությունները:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել կարողունակահեն դասի կարևորությունը՝որպես կրթության որակի բարձրացման հիմնական նախապայման, նաև դիտարկել ուսուցչի ֆունկցիոնալ դերը պատմության դասավանդման ընթացքում սովորողի ինքնուրույնության, նախաձեռնության խթանման, ստեղծագործական ունակությունների զարգացման համատեքստում:

Հետազոտության խնդիրները.

- Շեշտադրել ակտիվ և կարողունակեհեն ուսուցման արդյունավետությունը:
- Կարևորել սովորողի անկախ, ինքնուրույն գործելու, դասի ընթացքին ստեղծարար մոտեցում ցուցաբերելու կարևորությունը:
- Ցույց տալ ուսուցչի կողմից ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության դերն ու նշանակությունը՝ դասի արդյունավետության բարձրացման վրա:
- Ուսուցման նախագծային մեթոդը դիտարկել՝ որպես սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված մանկավարժական նորարարական մոտեցում:

1.1Ուսուցչի կողմից սովորողի ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված մանկավարժական պայմանները

Այսօր՝ առավել քան երբևէ, մարդու ցանկացած գործունեության համար առանցքային նշանակությունն ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, արագ ու նպատակային գործելու, ինչպես նաև նախաձեռնող լինելու կարողությունները: Նման անհրաժեշտությունը բացատրվում է ժամանակի առաջ քաշած մարտահրավերներով, երբ ամենաժամյա ռեժիմով կյանքի բոլոր ոլորտները գրանցում են աննախադեպ առաջընթաց: Վերը նշած կարողությունները կարևոր ու առանցքային են նաև դպրոցականների համար, ուստի և անհարժեշտություն է առաջացել վերանայել հանրակրթական ու առարկայական չափորոշիչները, դասատիպերը, դասավանդման մեթոդները, դասագրքերը: Այս համալիր բարեփոխումները մեծապես կարող են խթանել ուսուցման որակի բարձրացումը՝ տալով սովորողին ինքնուրույնություն, նախաձեռնողի դերում հանդես գալու հնարավորություն:Ուսումնական գործընթացի առանցքում սովորողն ու սովորեցնողն են: Դիտարկելով սովորեցնողի դերակատարումը ուսումնական գորընթացի արդյունավետ իրականացման տեսանկյունից՝ հարկ է նշել, որ ուսուցչի մասնագիտական և անձնային որակներն էական նշանակություն ունեն: Ժամանակակից ուսուցչի որակներից հատկապես առանձնացնենք հանդուրժողականությունը, շփվելու, հաղորդակցվելու, համագործակցելու կարողությունը, գենդերային անկողմնակալությունը, նաև կրթական բարեփոխումներին ընդառաջ գնալու, ինքնակրթվելու ձգտումը:

Եթե ինչ-որ ժամանակ սովորողին պարտադրվում էր այս կամ այն գիտելիքի, հմտության յուրացումը, ապա այսօր երեխան ինքն է իրեն ձևավորում, իսկ ուսուցիչը, պարզապես փորձում են ազդել նրա վրա: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[1]: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման առանցքում կարելի է դնել ակտիվ ուսուցումը, որն իրենից ենթադրում է այնպիսի մեթոդական համակարգի կիրառում, որը չի նախատեսում ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն: Ակտիվ ուսուցման հիմքում ընկած է ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և

[1] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:

հմտությունների ինքնուրույն ձեռքբերում սովորողների կողմից: Ակտիվ մեթոդների կիրառումն ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը: Ակտիվ ուսուցման մեթոդների օգտագործումը պահանջում է հատուկ գիտելիքների ձևավորում և գործնական քայլեր ուսումնական գործընթացի կազմակերպիչների կողմից[2]:

Ուսուցման ակտիվ մեթոդները նպաստում են սովորողների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Այնուամենայնիվ, կցանկանայինք շեշտել, որ այս համատեքստում բնավ չեն ստորադասվում դասավանդման ավանդական մեթոդները, ինչպիսիք են՝ պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Մինչև այսօր ուսումնառության գործընթացում ճանաչում ենք երկու կողմ. սուբյեկտ, այսինքն՝ ուսուցիչը, որը սովորեցնում է, և օբյեկտ՝ աշակերտը, որին սովորեցնում են: Ժամանակակից մանկավարժությունը նույն գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսուցման ընթացքում թե' ուսուցիչը, թե' աշակերտը փոխգործուն հարաբերությունների մեջ են, այսինքն՝ ընդունված սուբյեկտ-օբյեկտ գծապատկերին փոխարինում է սուբյեկտ-սուբյեկտ ժամանակակից գծապատկերը[3]:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացման համար արդի պայմաններում առանցքային դերակատարում ունեն դասավանդման մեջ ՏՀՏ գործիքների կիրառումը: Նորագույն տեխնոլոգիաներով հագեցած դասերն ունակ են սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնել կրթական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների հանդեպ: Սովորողը, կիրառելով իրեն հարմար համացանցային հարթակը կամ գործիքը, ինքնուրույն կարող է ուսուցանվող թեմայի շուրջ տեղեկատվություն հավաքել, հետազոտել, ծանոթանալ առցանց առաջարկվող ուսումնաօժանդակ նյութերին: Արդյունքում ստացվում է, որ համացանցը սովորողի համար դառնում է գործիք, որի օգնությամբ վերջինս հեշտությամբ կարողանում է

[2] Активные методы обучения рекомендации по разработке и применению, 2017, стр.4.

[3] Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014, էջ12:

կառավարել իրեն անհրաժեշտ տեղեկատվական հոսքերը: ՏՀՏ-ի միջոցների կիրառումը իրապես շոշափելի ազդեցություն ունի մանկավարժների աշխատանքի ինտենսիվության, ինչպես նաև աշակերտների ուսուցման արդյունավետության վրա: ՏՀՏ-ի օգտագործումը ուսուցչին մեծ հնարավորություններ է ընձեռում առարկայի ուսուցման ժամանակ: Դասերն ուղեկցվում են մուլտիմեդային ներկայացումներով, առցանց թեստերով և ծրագրային փաթեթներով, որոնք թույլ են տալիս սովորողներին խորացնել նախապես ստացված գիտելիքները[4]: Այսպիսով, ՏՀՏ գործիքների կիրառումը դասապրոցեսը դարձնում է ավելի ակտիվ, սովորողն ավելի հետաքրքրությամբ է մասնակցում դասին՝ ցուցաբերելով ինքնուրույն հետազոտելու և նախաձեռնողի դերում հանդես գալու ցանկություն:

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը նույնպես ժամանակակից կրթական համակարգի կարևոր բաղադրիչներից է: Որպես կրթության բարձրագույն նպատակ է սահմանվում ինքնազարգացող, ստեղծագործաբար մտածող ու գործող սովորողի ձևավորումը, ով ունակ է բաց ստեղծագործական փոխազդեցության միջավայրի և հասարակության հետ: Մանկավարժական գիտությունը կենտրոնական խնդիրներից է համարում կրթության ազդեցությունը անհատի ստեղծագործական զարգացման վրա: Սովորողի ստեղծագործական զարգացման առյուծի բաժինը դպրոցում է իրականացվում:

Ակտիվ մեթոդական զանազան հնարների կիրառումը թույլ է տալիս ուսուցչին արդյունավետ կիրառել դասաժամը: Այսպես դասի փուլերը տրամաբանորեն շաղկապվում են միմյանց, որևէ սովորող դասին պասիվ չի մնում, բոլորն աշխատում են, հետազոտում, լուծում իրենց առաջ դրած խնդիրը: Ակտիվ ուսուցման առավելություններից մեկն էլ հենց դասի ընթացքի դինամիկությունն է, ինչը բնորոշ է այսօրվա սովորողների խառնվածքին: Այնուամենայնիվ հարկ է նկատել, որ բազմաթիվ մեթոդներ կիրառելիս ուսուցիչը պետք է վստահ լինի մեթոդի արդյունավետության մեջ: Սովորողը նույնպես դժվարություններ ունի հարմարվելու ակտիվ ուսուցմանը, ինքնքկրթության մեթոդներին, ուստի ուսուցչի խնդիրն է նրան հասկանալի դարձնել, թե ինչ է անելու և ինչու: Պարզ է, որ բազմաթիվ մեթոդների իմացությունը անհրաժեշտ է, բայց դեռ բավարար չէ դրանք հմտորեն կիրառելու, ակնկալիքներն արդարացնելու, նորարարությունն ապահովելու և բարեփոխումները իրականացնելու համար: Ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորոցնել և ինչու՞ սովորեցնել հարցերը կազմում են ուսուցման գործընթացի միջուկը, որտեղ մեթոդն ունի կապող

[4]Մ. Զ. Հակոբյան, Գ. Ռ. Պետրոսյան, Վ. Ա. Մանուկյան, «ՏՀՏ-ի օգտագործումն ուսուցման գործընթացում»,էջ 139:

օղակի բարդ և առանձնահատուլ դեր: Վերջին հաշվով՝ ուսուցչի նպատակն է, որ աշակերտները հաղթահարեն կախվածությունը ուսուցչից և դառնան առավել ինքնուրույն: Աներկբա է, որ ուսումնական ընթացքի հաջողությունը մեծապես կախված է հենց ուսուցչի աշխատանքի ձևից, ուստի ուսուցիչը պետք է ունենա աշխատանքի իր հաջողված մոտեցումը՝ յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկություններին համապատասխան:

Այս համատեքստում ուսուցիչը պետք է՝

- Աշակերտին հնարավորություն տա ինքնուրույն գործել, ենթադրություններ անել, հայտնաբերել, կռահել, ճանաչել, համեմատել:
- Ուսուցման բովանդակությունը համապատասխանեցնի աշակերտների հետաքրքրություններին:
- Ստեղծի այնպիսի հաղորդակցական իրավիճակներ, որոնք հրապուրիչ կլինեն աշակերտների համար:
- Աշակերտների առջև դնի իրական, հաղթահարելի խնդիրներ և նպատակներ, որպեսզի յուրացնան ընթացքում նրանք զգան հաջողության հաճույքը:
- Խրախուսի հաջողությունը, գնահատի առաջընթացը:
- Ամեն կերպ խրախուսի սովորողի նախաձեռնողականությունը:
- Ստեղծի այնպիսի միջավայր, որտեղ սովորողը կկարողանա հաղթահարել իր վախերն ու կիսվել իր ստեղծարար գաղափարներով:

2.1 Ուսումնական նախագիծ «Հայոց պատմություն» առարկայից

Պայմանավորված կրթական համակարգի բարելավումներով ու բարեփոխումներով՝ առաջնահերթություն է դարձել թե' ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչների ու պատասխանատուների՝ ուսուցիչների, թե' առաջնային շահակիցների՝ սովորողների դերի վերանայումը դասագործընթացի ընթացքում. սովորողները պասիվ լսողներից վերածվել են դասի կենտրոնական սուբյեկտների՝ հնարավորություն ունենալով ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել, համակարգել, մշակել, հետազոտել, իսկ ուսուցիչն էլ ինքնաբերաբար դարձել է ավելի պասիվ կողմ՝ ուղղորդողի, աջակցողի ու վերահսկողի իր գործառույթներով: Սա, թերևս, գալիս է փաստելու, որ ժամանակի հետ ուսուցչակենտրոն ուսուցման մոդելն այլևս չի կարողանում բավարարել ժամանակակից սովորողների կրթական պահանջմունքները, ուստի և նախապատվություն է տրվում կրթության կարողունակահեն մոդելին: Ըստ էության՝ խոսքը կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթական մոդելի մասին է, որի շրջանակներում սովորողը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից, ինքնուրույն կատարում տեղեկատվության վերլուծություն, հնարավորություն ունենում դիրքորոշում տեսակետ, վերաբերմունք արտահայտելու, տրամաբանելու և կշռադատելու: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[5]:

Այս տրամաբանության մեջ կարելի է տեղավորել ուսուցման նախագծային տեխնոլոգիան՝ ի դեմս ուսումնական նախագծերի: Ուսուցման նախագծային մեթոդի հիմքում ընկած են ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ.Դյուիի կողմից առաջ քաշած մանկավարժական հասկացությունները: Վերջինիս գիտական տեսության հիմնական առանձնահատկությունը սովորողակենտրոն ուսուցման մեդելն էր

[5] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:

մանկավարժական աշխատանքի ընթացքում սովորողի շահերը, կարիքներն ու առանձնահատկությունները հաշվի առնելը, ուսուցման կիրառական բնույթը[6]:

«Ուսուցման նախագծային մեթոդը» առաջացել է 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ում: Նրա առաջացման ակունքները կապված են փիլիսոփայության և կրթության հումանիստական ուղղության գաղափարների հետ: Մեթոդի հեղինակներն են ամերիկացի փիլիսոփա և ուսուցիչ Ջ.Դյուին և նրա աշակերտ Վ.Խ. Կիլպատրիկը: Հեղինակների կողմից մեթոդի մեջ դրված հիմնական գաղափարը ակտիվ ուսուցումն է՝ համապատասխան սովորողների անձնական հետաքրքրությունների, կորողությունների հմտությունների:

Մարդը, ում ցանկանում ենք ուսուցանել, հասարակական անհատ է, իսկ հասարակությունը՝ անհատների օրգանական համակարգ: Երեխայի կարողությունները, հետաքրքրությունները և սովորությունները պետք է թարգմանվեն իրենց հասարակական համարժեքների լեզվով, այսինքն՝ կարևոր է ձևակերպել, թե ինչպես կարող են դրանք ծառայել հասարակությանը:
Ջ.Դյուի

Դյուին ճշմարիտ կրթություն էր համարում կոնկրետ իրավիճակներից բխող, հատուկ կազմակերպված առաջադրանքներով ու գործողություններով ուսուցումը, որն ունակ է հետաքրքրել սովորողներին՝ ապահովելով ինքնուրույն գործունեության հնարավորություն: Համաձայն այս մեթոդով իրականացվող ուսուցման՝ սովորողները հատուկ պլանավորված ուսումնական նախագծերի ընթացքում տեսական ու գործնական առաջադրանքներ են իրականացնում, ինչը ապահովում է ուսումնական նյութի համակողմանի ուսումնասիրության և տեսական գիտելիքը կիրառության մեջ դնելու հնարավորություն[7]: Մեթոդի հեղինակն իր «Իմ մանկավարժական դավանանքը» աշխատության մեջ գրում է. «Կարծում են, որ դպրոցը նախևառաջ հասարակական ինստիտուտ է, քանի որ կրթությունը հասարակական անընդհատ պրոցես է, իսկ դպրոցը հասարակական կյանքի այնպիսի ձև է, որտեղ կենտրոնացված են գործունեության բոլոր ձևերը, ինչը երեխային մարդկության ժառանգությունն առավել արդյունավետ և ամբողջական յուրացնելու և սեփական կորողությունները հասարակական նպատակներով օգտագործելու

[6] Васильева З. И. История педагогики и образования: учебное пособие для вузов. М.: Академия, 2011. с 131.
[7] Пискунов А. И. История педагогики и образования. От зарождения воспитания в первобытном обществе до конца XX в.: учебное пособие для педагогических учебных заведений / под ред. А. И. Пискунова. М.: Сфера, 2007. с. 384.

հնարավորություն է տալիս»[8]: Ուսուցման նախագծային մեթոդը համարվում է ներկայումս կիրավող կրթական նորարարաական տեխնոլոգիա, որը սովորողների համար սահմանում է որոշակի գործողությունների հաջորդականություն՝ առաջադրված խնդրիների լուծմանը հասնելու համար: Վերջնարդյունքում սովորողներն անհատական կամ խմբային եղանակով պաշտպանում են իրենց ուսումնական նախագիծը՝ հիմնավորելով կատարված աշխատանքների ընթացքը, ներկայացնելով արդյունքը: Այսպիսով, աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում են հավաքագրված տեղեկատվությունը՝ պատրաստվելով նախագծի պաշտպանությանը:

Պաշտպանությունը աշխատանքի վերջնական արդյունքն է, որը կարող է լինել ցանկացած բնույթի տեսանյութ, սահիկաշար, տեղեկատվական թերթիկ, ցուցապաստառ, պատի թերթ և այլն: Նախագծի վերջնական փուլում ուսուցիչը լսում է, աշակերտներին հարցեր ուղղում, գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը: Աշակերտները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը: Նշված կրթական միջավայրի ապահովումը, մեր խորին համոզմամբ, օրապահանջ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցչակենտրոն դասի օգնությամբ բավականին դժվար է բավարարել ժամանակակից սովորողների կրթական պահանջմունքները, միևնույն ժամանակ հավակնել որակյալ, մասնակցային կրթական միջավայր ունենալուն, ուստի կարծում ենք՝ ուսուցման նախագծային մեթոդը էապես կօգնի կրթության որակի բարելավմանն ու կարողունակահեն կրթական մոդելի ինտեգրմանը հանրակրթական համակարգին: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սովորողների համար սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար: Սա նաև խթան է սոցիալականացման, հասարակությանն ինտեգրվելու, սոցիալական և քաղաքացիական պատասխանատվություն ձևավորելու առումով: Նախագծային ուսուցումը կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և դպրոցական մակարդակից և գնում է դեպի համայնք[9]:

Ուսումնական նախագիծը ըստ տևողության կարող է լինել.

- Կարճաժամկետ

[8] Դյուի Ջ., «Մանկավարժական իմ դավանանքը», Դպիր, 2013, թարգմանությունը՝ Գ. Հակոբյանի, էջ 4:
[9] Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին) Բուն գիտամասնագիտական TV, http://boon.am/learning/:

- Միջնաժամկետ
- Երկարաժամկետ

Ուսումնական նախագիծը ըստ մասնակիցների քանակի կարող է լինել.

- Անհատական
- Խմբային

Ուսումնական նախագիծը ըստ բովանդակության կարող է լինել.

- Որևէ առարկայի վերաբերող
- Ինտեգրված
- Միջառարկայական

Նախագծային գործունեության նախագծումը բավականին աշխատատար ընթացք է, ունի հստակ փուլեր, դրանք են՝

- Թեմայի, գործունեության ընտրություն
- Աշխատանքի պլանավորում
- Տեղեկատվական հոսքերի կառավարում
- Գործընթացի կազմակերպում
- Գործընթացի իրականացում
- Արդյունքների ցուցադրություն, պաշտպանություն

Բավականին արդյունավետ ենք համարում նախագծային աշխատանքի իրականացումը «Հայոց պատմություն» առարկայի դասերին, ինչն առաջին հերթին աշակերտի մոտ հնարավոր է դարձնում սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների ձևավորումը[10], ինքնուրույնության ու նախաձեռնության խթանումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը: Դիտարկենք «Հայոց պատմություն» ուսումնական առարկայից նախագծային աշխատանքի օրինակ:

[10] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

- Դասարան՝ 8-րդ
- Թեմա՝ «Հայոց ցեղասպանությունը»
- Նախագծի անվանում՝ «Արդարության հետքերով»
- Աշխատանքի տևողությունը՝ 1 ամիս

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿԸ

■Ձեռք բերել գիտելիքներ Հայոց ցեղասպանության (շարժառիթներ, պատճառներ, ծրագրեր փուլեր, հետևանքներ, պատմական դասեր, ճանաչման գործընթաց, ինքնապաշտպանական մարտեր) վերաբերյալ, ըմբռնել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը Հայաստանի Հանրապետության, ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է:

■Հաղթահարել զոհ լինելու բարդությները, ձևավորել պատմական արդարության վերականգնման, կորսված հայրենիքի պահանջատեր լինելու, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարի գիտակցություն, ձևավորել մերժողական վերաբերմունք մարդու կամ որևէ ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների հանդեպ՝ կանխելու այսօր էլ շարունակվող բռնությունները:

■Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի յուրացման, կորուստներից դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

■Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

■Նկարագրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրությունը. Հայաստանի իրավիճակը XIX դարի վերջին XX դարի սկզբին:
■Ներկայացնի 1915-1916 թթ ինքնապաշտպանական մարտերը, համեմատի և վերլուծի դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:
■Արտահայտի սեփական տեսակետներ և դիրքորոշումներ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, պահանջատիրության, ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղիների, և հիմնախնդրի զարգացման հեռանկարների և արդյունքների վերաբերյալ:
■Գնահատի Հայոց եղեռնի վերաբերյալ մեծ տերությունների, առաջադեմ գործիչների և կազմակերպությունների արձագանքները:
■Ցույց տա Հայոց ցեղասպանության անպատժելիության և XX դարի ցեղասպանությունների կապը, դատապարտի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն:

Որպես նախագծային աշխատանքի մեկնարկ՝ աշակերտները կայցելեն Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ «Ծիծեռնակաբերդ», ծաղիկներ կխոնարհեն անմեղ զոհերի հիշատակին, կծանոթանան թանգարանին ցուցանմուշներին: Այցելությունը կօգնի, որ սովորողներն առավել պատկերավոր պատկերացնեն արհավիրքի մասշտաբներն ու ավելի պատասխանատու մոտենան աշխատանքին: Ուսուցիչը կուղղորդի աշակերտներին օգտվել Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի պաշտոնական կայքից՝ /http://www.genocide-museum.am/arm/, որտեղից նրանք կարող են ծանոթանալ պատմական փասթաթղթերին, վերապրողների ու ականատեսների հուշերին, միսիոներների ավանդին՝ հայ որբերի փրկության գործում: Նախագծային աշխատանքի իրականացումը կօգնի աշակերտներին դուրս գալ դասագրքային տիրույթից, հավաքել տեղեկություններ հայոց ցեղասպանության դրա նախադրյալների, պատճառների ու հետևանքների վերաբերյալ: Աշակերտները կուսումնասիրեն նաև մեդիա դաշտը՝ ծանոթանալու համար միջազգային կազմակերպությունների ու առանձին երկրների դիրքորոշումներին՝ վերաբերող «Հայ դատի» և Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

Կկամազմավորվեն թվով 4 աշխատանքային խմբեր, որոնցից յուրաքանչյուրը կունենա հետազոտության իր ենթաթեման ու ոլորտը: Որպես ուսումնական նախագծի վերջնարդյունք՝ սովորողները կպատրաստեն իրազեկող ցուցապաստառ և սահիկաշար:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Աշակերտներն առցանց հարթակում կփնտրեն, կտեղայնացնեն ու կմշակեն անհրաժեշտ տեղեկատվություն «Նեմեսիս» գործողության մասին՝ ուսումնասիրելով Սողոմոն Թեհրելյանի, Ավ. Իսահակյանի, Շահան Նաթալու գործունեությունը:
2. Կանդրադառնան նաև «Կարմիր կիրակի» չարաբաստիկ օրվա իրադարձություններին:
3. Կուսումնասիրեն հայ մտավորականների տեղահանությունը ապրիլի 24-ին, որի ընթացքում Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայ համայնքի առաջնորդները, իսկ հետագայում նաև կայսրության այլ համայնքների հայտնի ներկայացուցիչները ձերբակալվեցին ու սպանվեցին: Այստեղ միջառարկայական կապը «Հայ գրականություն» առարկայի հետ ակնհայտ է:
4. Կհավաքեն և կմշակեն տեղեկություններ այլ ցեղասպանությունների վերաբերյալ, զուգահեռներ կտանեն Ադոլֆ Հիտլերի և Երիտթուրքերի պարագլուխների միջև:
5. Տեղեկություններ կհավաքեն նշանավոր հայդուկների, միսիոներների, հայ գաղթականներին աջակցող այլազգիների մասին:
6. Կծանոթանան վերապրողների պատմություններին:
7. Առցանց քարտեզի վրա կուսումնասիրեն հայ հալածյալ գաղթականների ճանապարհները:

Այսպիսով, կարող ենք ասել, որ նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների ստեղծագործական ներուժի ակտիվացմանը, կարողությունների բացահայտմանը, յուրաքանչյուր սովորողի կրթության անհատական ուղու ստեղծմանը: Արդյունքում՝ սովորողը գործնականում կհասկանա, թե որքան կարևոր է սովորել, ինքնազարգանալ ու հավաքել անսահմանափակ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ և որպես վերջնարդյունք, կարծում ենք, կբարձրանա սովորողների սովորելու մոտիվացիան: Միևնույն ժամանակ՝ կզարգանան սովորողների պատմական մտածողությունը, համադրելու, համեմատելու, պատճառահետևանքային կապեր տեսնելու, դիրքորոշում հայտնելու կարողություններ:

Ուսուցման նախագծային մեթոդն իսկապես կարող է խթան հանդիսանալ «Հայոց պատմություն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում սովորողների ինքնուրույնությունը խթանելու, նրանց նախաձեռնողական գործունեությունը խրախուսելու և ուսումնական գործընթացին ստեղծագործաբար մոտենալու տեսանկյունից: Միևնույն ժամանակ՝ ուսումնական նախագծերի իրականացման ընթացքում սովորողները հնարավորություն կունենան՝ քննադատաբար մոտենալու պատմական իրողություններին, պատմական դեպքերն ու իրողությունները առավել խորքային ուսումնասիրելու, գրքային տեղեկատվությունից զատ, այլ նյութեր ուսումնասիրելու: Արդյունքում դասարանում կստեղծվի համագործակցային միջավայր, կզարգանա սովորողների ռեֆլեքսիան, ՏՀՏ հմտությունները:

Լիահույս ենք, որ այս հետազոտությունը կդառնա ուղենիշ մեր մանկավարժական հետագա գործունեության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, եթե ընդհանրացնենք մեր ուսումնասիրության արդյունքները, կարող ենք կատարել հետևյալ դիտարկումները.

- Դպրոցականների կրթության, դաստիարակության լիարժեքության համար, պարտադիր պայման է վերջիններիս քննադատական մտածողության, ինքնուրույնության ու նախաձեռնության ձևավորումն ու զարգացումը ուսումնական ծրագրերով նախատեսված առարկաների, այդ թվում՝ «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում:
- Կիրառելով ուսուցման ակտիվ մեթոդների տարատեսակները՝ ուսուցիչը կարող է միջավայր ստեղծել, որպեսզի զարգանա սովորողի մտածողությունը, իմացական ոլորտը, դասին բարձրանա վերջինիս ակտիվ մասնակցությունը:
- Ուսուցչի մասնագիտական որակները, նորարարական գաղափարների ներդրումը դասին մեծապես կօգնի սովորողին նույնպես հանդես գալ որպես նորարար, նախաձեռնող ու ստեղծագործ:
- Ուսուցման նախագծային մեթոդը մեծապես կարող է նպաստել սովորողնի սովորելու մոտիվացիայի բարձրացմանը, ինքնուրույնության ու նախաձեռնության խթանմանը:
- Պատմության դասին շատ կարևոր է սովորողի տրամաբանական, վերլուծական, քննադատական միտքը, հակառակ պարագայում՝ ուսուցումը կարելի է համարել լոկ մեխանիկական վերարտադրություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:
3. Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014:
4. Մ. Զ. Հակոբյան, Գ. Ռ. Պետրոսյան, Վ. Ա. Մանուկյան, «ՏՀՏ-ի օգտագործումն ուսուցման գործընթացում»:
5. Ջ. Դյուի, «Մանկավարժական իմ դավանանքը», Դպիր, 2013, թարգմանությունը՝ Գ. Հակոբյանի:
6. Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին) Բուն գիտամասնագիտական TV, http://boon.am/learning/:
7. Активные методы обучения рекомендации по разработке и применению, 2017:
8. Васильева З. И. История педагогики и образования: учебное пособие для вузов. М.: Академия, 2011.
9. Пискунов А. И. История педагогики и образования. От зарождения воспитания в первобытном обществе до конца XX в.: учебное пособие для педагогических учебных заведений / под ред. А. И. Пискунова. М.: Сфера, 2007.